



**Հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության
վերլուծությունն առկա բացերի տեսանկյունից**

**«Քաղաքացիական հասարակության մասնակցությունը Հայաստանում քիմիական
անվտանգության պաշտպանությանը» ծրագիր**

Երևան 2022



Հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության վերլուծությունն առկա բացերի տեսանկյունից

Հեղինակ՝ Ռոզա Ջուլիակյան

Խմբագիր՝ Ինգա Ջարաֆյան

Հաշվետվությունը պատրաստվել է «Քաղաքացիական հասարակության մասնակցությունը Հայաստանում քիմիական անվտանգության պաշտպանությանը» ծրագրի շրջանակներում՝ Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ բարեփոխումների աջակցության ծրագրի (Transition) շրջանակներում:

«Քաղաքացիական հասարակության մասնակցությունը Հայաստանում քիմիական անվտանգության փաստաբանությանը» ծրագիրն իրականացվում է 2022-2023 թվականներին «Առնիկա» հասարակական կազմակերպության (Չեխիայի Հանրապետություն) կողմից՝ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» և «ԷկոԼուր» տեղեկատվական հայաստանյան հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Հաշվետվության բովանդակությունը չի արտացոլում Չեխիայի արտաքին գործերի նախարարության կամ ֆինանսական աջակցություն տրամադրող հաստատություններից որևէ մեկի պաշտոնական տեսակետը: Բովանդակության համար պատասխանատվությունն ամբողջությամբ ստանձնում են հետազոտության հեղինակները:

Բովանդակություն

Ներածություն	էջ 4
Հիմնական բովանդակություն.....	էջ 6
1. ՀՀ Սահմանադրություն.....	էջ 6
2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք.....	էջ 6
3. «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրք.....	էջ 11
4. «Թափոնների մասին» ՀՀ օրենք.....	էջ 14
5. ՀՀ Հարկային օրենսգիրք.....	էջ 16
5. ՀՀ Հողային օրենսգիրք.....	էջ 16
6. «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք	էջ 18
7. ՀՀ Ջրային օրենսգիրք	էջ 21
8. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք.....	էջ 26
9. ՀՀ Քրեական օրենսգիրք.....	էջ 28
10. ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք.....	էջ 29
Եզրակացություն	էջ 31

Ներածություն

Օգտակար հանածոների, հատկապես հազվագյուտ և գունավոր մետաղների արդյունահանումն ու վերամշակումն ուղեկցվում է շոշափելի հետևանքներով, և՛ շրջակա միջավայրի, և՛ մարդու առողջության վրա բացասական ազդեցությամբ: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) գործող օրենսդրությունը պետք է կարգավորի նման հետևանքների կանխարգելման մեխանիզմները, սակայն գործնականում օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, նորմատիվներն ունեն էական թերություններ, որոնք թույլ չեն տալիս ապահովել շրջակա միջավայրի պահպանությունն ու կանխել ռիսկերը, ինչպես նաև նվազեցնել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, չեն նպաստում ընդերքի ռացիոնալ օգտագործմանը, չեն խթանում այդ ոլորտում առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը:

Հանքարդյունաբերության ազդեցության տակ գտնվող տարածքների օդը, մակերևութային և ստորերկրյա ջրերը, հողը շարունակում են աղտոտվել մետաղական հանքավայրերի հանքաքարի արդյունահանման և վերամշակման արդյունքում վտանգավոր նյութերով և միացություններով: Շրջակա միջավայրի տարրերի միջոցով աղտոտման շղթան իր բացասական ազդեցությունն է ունենում մարդու առողջության վրա: Ազդակիր համայնքների բնակչությունը պասիվ մասնակցություն ունի հանքարդյունաբերության ոլորտի ծրագրերի վերաբերյալ որոշումների կայացմանը և չունի օրենսդրական գործիքներ՝ իր իրավունքները պաշտպանելու համար:

Սույն ուսումնասիրության նպատակն է.

1. Մթնոլորտային օդի, ստորերկրյա և մակերևութային ջրերի, հողի և բնական պաշարների կառավարումը կարգավորող, ինչպես նաև աղտոտման կանխարգելմանն ուղղված շրջակա միջավայրի մոնիթորինգ/ինքնամոնիտորինգ նախատեսող ՀՀ գործող իրավական ակտերի վերլուծություն, որոնք սահմանում են պետական վերահսկողության, հանքարդյունաբերության թափոնների կառավարման, շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության փոխանակման, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության գործառույթները:

2. Օրենսդրական բացերի բացահայտում և պատասխանատու գերատեսչություններին օրենսդրական և ինստիտուցիոնալ առաջարկությունների տրամադրում հանքարդյունաբերության և վերամշակման ոլորտի բնապահպանական և սոցիալական պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:

Այս համատեքստում ուսումնասիրվել են ՀՀ Սահմանադրության, «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի, ՀՀ հողային օրենսգրքի, ՀՀ Ջրային օրենսգրքի, ՀՀ քրեական օրենսգրքի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի, «Թափոնների մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածները, ինչպես նաև օրենքներին համապատասխան ենթաօրենսդրական ակտեր՝ ՀՀ կառավարության որոշումներ, նորմատիվ ակտեր և այլն:

Հայտնաբերվել են բացթողումներ, որոնք խոչընդոտում են վերոնշյալ իրավական նորմերի կիրարկմանը:

Հիմնական բովանդակություն

Ընդերքօգտագործման բնագավառում ՀՀ շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորվում է հետևյալ իրավական նորմերով:

1. ՀՀ Սահմանադրություն

Հոդված 12: «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»:

Նույն հոդվածի 2-րդ կետում ասվում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Հոդված 86: Հոդվածում սահմանվում են հանրային քաղաքականության 16 հիմնական նպատակները: Շրջակա միջավայրի պահպանությունն ուղղակիորեն չի սահմանվում որպես պետության հիմնական նպատակ, սակայն հիմնական նպատակների իրականացման համատեքստում նշվում է ՀՀ-ում առողջ շրջակա միջավայրի առկայությունը:

87-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակներն իրականացվում են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ իրենց լիազորությունների և հնարավորությունների սահմաններում, իսկ կառավարությունը տեղեկատվություն է ներկայացնում 86-րդ հոդվածով սահմանված նպատակներին հասնելու մասին: Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված զեկույցի շրջանակներում:

Հիմնական բացեր

1. Պետական քաղաքականության նպատակների շարքում շրջակա միջավայրի պահպանությունը չի դիտվում որպես առաջնահերթություն:
2. Սահմանադրությունը չի պարունակում որևէ դրույթ ներկա և ապագա սերունդների՝ առողջ և կայուն միջավայրում ապրելու իրավունքի վերաբերյալ:
3. Ոլորտը կշահեր, եթե շրջակա միջավայրի պաշտպանությունը դիտարկվեր որպես հանրային քաղաքականության առաջնահերթություններից մեկը:

2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, այսուհետ՝ ՇՄԱԳ մասին օրենք (ՀՕ 110-Ն, 2014թ.)

Օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը, ոլորտները, բովանդակությունը և իրավական հետևանքները, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ենթակա գործունեության տեսակների

դասակարգումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անցկացման կարգը, այդ գործընթացում հասարակության մասնակցությանը վերաբերող համապատասխան ժամկետներն ու դրույթները:

5-րդ հոդվածը սահմանում է, որ փորձաքննության և գնահատման սկզբունքները պետք է հիմնված լինեն մարդու առողջության, բնականոն կյանքի և ստեղծագործական գործունեության համար բարենպաստ միջավայրի իրավունքի վրա, բնական ռեսուրսների արդյունավետ, ինտեգրված և ռացիոնալ օգտագործման պահանջի վրա:

Այնուամենայնիվ, հայտերի և հաշվետվությունների նախնական գնահատման փուլերում բավարար ուշադրություն չեն դարձնում օգտակար հանածոների արդյունավետ, համապարփակ և ռացիոնալ օգտագործման խնդիրներին և մարդու առողջության վրա դրանց ազդեցության գնահատման խնդիրներին: Հանքարդյունաբերության ազդեցությունը մարդու առողջության վրա գնահատելու անտեսումը մասամբ պայմանավորված է համապատասխան ենթաօրենսդրական ակտի բացակայությամբ:

Հոդված 6-ով սահմանվող գնահատման և փորձաքննության նպատակներում և խնդիրներում դարձյալ ընդգծվում են հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը. ինչպես նաև էկոլոգիական անվտանգության պահանջների և բնապահպանական սահմանափակումների հիման վրա կայուն զարգացմանը նպաստելը:

Հոդվածով 7-ով սահմանված են ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկման ենթակա 13 օբյեկտների՝ մթնոլորտային օդ, մակերևույթային և ստորերկրյա ջրեր, հող, երկրաբանական կառուցվածք, գոյացություններ, ռելիեֆ, լանդշաֆտ, բուսական և կենդանական աշխարհ, անտառներ, պատմության և մշակույթի հուշարձաններ, թափոններ, ֆիզիկական ազդեցություններ, առողջապահական գործոններ, սոցիալական գործոններ, արտակարգ իրավիճակների հավանականություն բնութագրերը և տվյալ բաղադրիչի գնահատման շրջանակները:

Հոդված 10-ը սահմանում է փորձաքննության անցկացման համար լիազորված պետական կառավարման մարմնի լիազորությունները:

Հոդված 11-ը սահմանում է «Շրջակա միջավայրի վրա ներգործության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լիազորությունները (փորձաքննության անցկացում, փորձաքննության եզրակացությունների կազմում և տրամադրում):

Խնդիրն այն է, որ այս հոդվածներով չեն կարգավորվում փորձաքննական եզրակացությունը պետական պաշտոնական փաստաթուղթ դիտարկելու և այն որպես

որպես վարչական ակտ ձևակերպելու խնդիրները: Ավելին, օրենքի հոդվածի 20-ի 4-րդ մասում ամրագրված է, որ լիազոր մարմինը հաստատում է «փորձաքննական», այլ ոչ թե «պետական փորձաքննական» եզրակացությունը: Օրենքի այս անհստակության հետևանքով ՀՀ շրջակա միջավայրի նախարարը միայն իր ստորագրությամբ է հաստատում այն: Դրա արդյունքում պետական փորձաքննական եզրակացություն փաստաթուղթը չունի պարտադիր կատարման ենթակա վարչական ակտի կարգավիճակ: Որպեսզի այն ստանա վարչական ակտի կարգավիճակ, Օրենքի համապատասխան հոդվածով անհրաժեշտ է ամրագրել, որ պետական փորձաքննական եզրակացությունը հաստատվում է բնապահպանական ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինողի հրամանով, կարգադրությունով կամ որոշումով:

Օրենքը չի սահմանում փորձաքննությունը հետ կանչելու հստակ մեխանիզմներ: Այսպես, օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, փորձաքննության եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսված գործունեության իրականացումը չի սկսվում եզրակացությունը տալուց հետո մեկ տարվա ընթացքում: Ընդ որում, օրենքի ուժով եզրակացությունն կորցնելու իրավունք չունի: Դա հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասին: Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փորձաքննական եզրակացությունը հետ վերցնելու դեպքում ընդերքօգտագործողի վրա դրվում է նոր պարտականություն, ինչը կիրառելի չէ, քանի որ կրում է ավելի խիստ պատասխանատվություն: 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի կիրարկման համար բացակայում է ՇՄԱԳ օրենքում օգտագործվող «բնապահպանական գործոններ» կամ «նոր բնապահպանական գործոններ» տերմինների պաշտոնական և հասկանալի սահմանումը, և փորձագետի կողմից մեկնաբանությունը կարող է ընկալվել որպես սուբյեկտիվ և ոչ ադեկվատ:

Հոդված 17-ի 4-րդ մասով ՀՀ կառավարությունից պահանջվում է մշակել և կիրարկել «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման» կարգը:

Հոդված 14-ի համաձայն՝ մետաղական հանքավայրերի շահագործման գործունեության գնահատումն իրականացվում է Ա կատեգորիային ներկայացվող ընթացակարգով (4-րդ մաս, կետ 2, ենթակետ բ), և բոլոր փուլերը պետք է անցնեն հանրային քննարկումներ՝ համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով (ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 9-ի «Հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 399-Ն որոշում, ՀՀ բնապահպանության նախարարի 18.11.2014թ. N347-Ն հրաման, Հավելված 2, ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» որոշում):

Փորձաքննությունն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Վերջինս

պետք է փորձաքննի ծրագրերի, ինչպես նաև դրանց այլընտրանքային տարբերակների հնարավոր ներգործությունը շրջակա միջավայրի տարրերի, մարդու առողջության, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների վրա և հնարավոր սոցիալական խնդիրները:

Օրենքը, սակայն, ՊՈՍԿ-ի փորձագետին չի տալիս տեղում դաշտային ուսումնասիրություններ կատարելու կամ ներկայացվող փաստերի ստուգման այլընտրանքային տարբերակներ կիրառելու իրավասություն: Դրանով իսկ նրան ուղղորդում է բացառապես դեպի շահառուի՝ ընդերքօգտագործողի կողմից ներկայացրած նախագծի և դրա հիման վրա կազմված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փաստաթղթային ուսումնասիրության և վերլուծության:

26-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ՇՄԱԳ գործընթացում հասարակայնության իրազեկման և մասնակցության ապահովման պահանջները, ինչպես նաև ծանուցման բովանդակությունը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխության ընդունմանը զուգահեռ կառավարությունը 2014 թվականի նոյեմբերի 19-ին ընդունել է «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն որոշումը: Սահմանված են հանրային լսումների կազմակերպման գործընթացում ներգրավված մարմինները, տրված են լսումների ժամանակ հանրության դիտողությունները և առաջարկությունները ձեռնարկողի և լիազորված մարմնի կողմից հաշվի առնելու կամ չառնելու հանգամանքի մասին դրույթներ:

Ներկայում օրենքի և համապատասխան որոշման այս պահանջի կատարումը խնդրահարույց է, քանի որ համայնքների խոշորացման արդյունքում մի համայնքի մեջ միավորվել են մի քանի՝ այդ թվում նաև տվյալ ընդերքօգտագործման ծրագրի ազդակիր չհանդիսացող բնակավայրեր, և հանրային կարծիքի հաշվի առնելու նպատակով կազմակերպվող հանրային լսումների բոլոր փուլերում առաջացել է ազդակիր բնակավայրերի բնակիչների կարծիքի ճնշման ռիսկ: Ռիսկը պայմանավորված է ընդհանուր մասնակիցների մեջ իրական ազդակիր բնակավայրի ներկայացուցիչների թվաքանակի պակասով: Անրաժեշտ է կատարել օրենսդրական կարգավորումներ:

Համայնքի/բնակավայրի համար ազդեցության կարգավիճակի որոշումը կրում է նաև մանիպուլյատիվ բնույթ, քանի որ օրենքը հստակ սահմանումներ չունի հանքարդյունաբերական բիզնեսի ենթակառուցվածքների օբյեկտների շրջակա միջավայրի վրա ազդեցության սահմանների վերաբերյալ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգը, որը սահմանված է ՇՄԱԳ օրենքի 4-րդ հոդվածի 26-րդ կետով, ենթադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգ և վերլուծություն հիմնադիր փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում և դրանից հետո, կամ պլանավորված գործողությունների իրականացում, որոնք ուղղված են փորձաքննական եզրակացության պահանջների կատարմանը կամ

արտադրության վերահսկմանը/ինքնատիրապետմանը: Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի ծրագրի հաստատումը և այդ ծրագրի իրականացումը ՇՄԱԳ եզրակացության մեջ նշվում է որպես փորձաքննական պահանջ: Օրենքի համաձայն՝ այդ պահանջի ապահովման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: ՀՀ կառավարությունն այս որոշումն ընդունել է 2018 թվականի փետրվարի 22-ին 191-Ն որոշմամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կայքի¹ համաձայն՝ 2018-2019թթ. շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) հաշվետվություններ են ներկայացրել մետաղական հանքավայրեր շահագործող ընդամենը 4 ընկերություններ: Այդ հարցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը չունի ակտիվ դերակատարում և կազմակերպությունների վրա ազդելու մեխանիզմներ /ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 19.08.2019թ N 07.1/52174 պատասխանը «ԷկոԼուր» ՀԿ-ի հարցմանը՝ Հավելված 3/: Այսինքն, օրենքով սահմանվող պահանջը չունի իմպերատիվ բնույթ և դրա կատարումը կախված է ընդերքօգտագործողի բարի կամքից: Անհրաժեշտ է, որպեսզի ընդունվի իրավաբանական անձանց կողմից իրենց արտադրական պրոցեսի, դրա ընթացքում առաջացած շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող աղտոտող նյութերի և օգտագործվող հումքի նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին օրենք:

Հիմնական բացերը

1. Օրենքը բավարար չափով չի կարգավորում բնական ռեսուրսների, այդ թվում նաև օգտակար հանածոների արդյունավետ, համալիր և բանական օգտագործման, ինչպես նաև մարդու առողջության վրա թողած ազդեցությունների գիտականորեն հիմնավորված գնահատման մեխանիզմները:
2. Պետական փորձաքննական եզրակացություն փաստաթուղթը չունի պարտադիր կատարման ենթակա վարչական ակտի կարգավիճակ:
3. Օրենքը չի սահմանում փորձաքննությունն ուժը կորցրած ճանաչելու հստակ մեխանիզմներ:
4. Օրենքը պետական լիազոր մարմնի փորձագետին չի տալիս տեղում դաշտային ուսումնասիրություններ կատարելու կամ ներկայացվող փաստերի ստուգման այլընտրանքային տարբերակներ կիրառելու իրավասություն:
5. Օրենքը չի ապահովում տնտեսական գործունեության կամ հայեցակարգի, այդ թվում նաև հանքարդյունահանման կամ մետաղական օգտակար հանածոյի հումքի մշակմամբ զբաղվող կազմակերպության գործունեության փորձաքննության գործընթացում գործունեության բացասական ազդեցությունները կրող բնակավայրի բնակիչների կարծիքի առաջնեությունը հասարակական լուսմների ժամանակ:

¹ <http://www.mnp.am/am/pages/233>

6. Օրենքով սահմանվող՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագրի պահանջը չունի իմպերատիվ բնույթ, և դրա կատարումը կապված է ընդերքօգտագործողի բարի կամքից:
7. Օրենքով չի պահանջվում իրավաբանական անձանց կողմից իրենց արտադրական պրոցեսի, դրա ընթացքում առաջացած շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող աղտոտող նյութերի և օգտագործվող հումքի նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին առանձին իրավական ակտի ընդունում:
8. Օրենքն ունի որոշակի հակասություններ այլ իրավական ակտերի հետ:
9. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5 ենթակետը կիրարկելու համար չկա «էկոլոգիական գործոններ», կամ «էկոլոգիական նոր գործոններ» եզրույթների հստակ և հասկանալի սահմանում:
10. ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն որոշումը կրում է ընդհանուր բնույթ, որոշում կայացնելու համար հստակ պահանջներ չկան հասարակությանը և համայնքին տրամադրվող անհրաժեշտ տեղեկատվության ծավալի և բովանդակության վերաբերյալ, քննարկման մասնակիցների նվազագույն թվի, լսումների անցկացումից մի քանի օր հետո ներկայացվող արձանագրությանը մասնակիցների ծանոթացման կարգի վերաբերյալ պահանջներ չկան, որոնք կրում են ընդհանրական բնույթ: Ըստ էության համայնքի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում կրում է ձևական բնույթ, ինչը հանգեցնում է հետագա սոցիալական բախումների ինչպես համայնքում, այնպես էլ համայնք-բիզնես-իրավասու պետական մարմիններ փոխհարաբերություններում:

3. Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք

Հոդված 1-ում նշվում է, որ Օրենսգիրքը սահմանում է ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 4 –ում միանշանակ սահմանված է, որ ընդերքը ՀՀ պետության բացառիկ սեփականությունն է: Այս հոդվածով ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման մի շարք հիմնադրույթների շարքում նշված են նաև բնակչության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը և ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման ոլորտում պետական վերահսկողությունը՝ բնակչության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման նպատակով:

Հոդված 5-ում իմպերատիվ կերպով ամրագրված է, որ ընդերքի տեղամասերն օգտագործման են տրամադրվում ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության և մարդկանց կյանքի ու առողջության պաշտպանության հետ կապված օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման պայմանով:

Հոդված 9-ի 3-րդ մասով կարգավորվում են մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողի կողմից կառավարություն հաշվետվության ներկայացման կարգը և պահանջվող տեղեկատվությունը: Հաշվետվությունը պետք է պարունակի նաև շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարված հատկացումները, օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացման վճարները:

Հոդվածի 17-ի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարն ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ պետք է կնքի հողօգտագործման պայմանագիր, իսկ ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձը պետք է համայնքի ղեկավարի համաձայնությանը ներկայացնի ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուլտիվացիայի ծրագիրը:

Հոդված 46-ով (Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձի իրավունքները և պարտականությունները հոդված 50-ով (Օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը), հոդված 54-ով (Օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի կնքումը) ընդերքօգտագործողից պահանջվում է բնապահպանական կառավարման պլանի ներկայացում (ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում) և դրա ամրագրում ընդերքօգտագործման պայմանագրում:

Հիմք ընդունելով «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, 27-րդ կետը՝ ՀՀ կառավարությունը 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 1848-Ն որոշմամբ հաստատել է «Ընդերքօգտագործման, ընդերքի փակ օբյեկտների, թափոնների օգտագործման ժամանակ խախտված հողերի ռեկուլտիվացիայի, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման մեթոդական ցուցումները»: Ըստ այդ որոշման՝ հողօգտագործողը կամ կառավարիչը կամ վարձակալը կամ սերվիտուտի տիրապետողը հողերի խախտման դեպքում խախտված հողերի վերականգնումն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ կառավարությունը ընդունել է «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու

մասին» 22.02.2018 թ.թիվ 191-Ն որոշումը: Այն սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

Հիմնական բացեր

1. Օրենսգրքի 58,1 հոդվածով պահանջվող հանքավայրերի փակման ծրագրերին ներկայացված են ընդհանրական մոտեցումներ, չեն ներառում կոնսերվացման, վերականգնման և պահպանման այն բոլոր չափանիշերը, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի էկոհամակարգի կայունացմանը:
2. Հստակ չեն ձևակերպված ընդերքօգտագործման թափոնների՝ վտանգավոր և ոչ վտանգավոր կատեգորիաների դասակարգման մեխանիզմները:
3. Գոյություն ունի օրենսդրական հակասություն, մասնավորապես, ընդերքը պետության սեփականություն է, իսկ հողը կարող է լինել նաև համայնքապատկան: Ընդերքի օգտագործման համար պետության տված ընդերքօգտագործման թույլտվության իրացման համար պահանջվում է հողօգտագործման պայմանագիր, որը պետք է կնքել համայնքի հետ: Այսինքն, համայնքն իր իրավասությունների սահմանում կարող է նաև չկնքել հողօգտագործման պայմանագիր՝ չնայած ընդերքօգտագործման իրավունքի առկայությանը, կամ հակառակը:
4. Չնայած այն հանգամանքին, որ օրենսգիրքն ընդերքօգտագործողից պահանջում է շրջակա միջավայրի կառավարման պլանի պարտադիր առկայություն և դրա կատարման մասին հաշվետվության ներկայացում, գործնականում պլանի պահանջները չեն բավարարվում, կամ այդպիսի պլան չկա: Գործնականում ընկերությունները պատասխանատվություն չեն կրում այս պահանջը չկատարելու համար:
5. Օրենքով կամ դրանից բխող ենթաօրենսդրական ակտով պետական լիազոր մարմինը չունի կազմակերպության կողմից ներկայացված մոնիտորինգի հաշվետվություններում առկա տվյալների հավաստիության ճշգրտման, կամ բացասական շեղումների վերացմանն ուղղված հանձնարարագրեր տալու իրավասություններ:
6. ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անդառնալի հետևանքների կանխարգելման նպատակով պլանային մոնիթորինգի իրականացման պահանջները սահմանելու, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգի մասին» N 191-Ն որոշումը պարունակում է անորոշություններ, այն է՝ հանքից հոսանքն ի վեր և հոսանքն ի վար հոսող մակերևութային ջրերի հատակային նստվածքներում, հանքին հարող և հավանական

ռիսկի գոտու բնակավայրերի հողածածկ տարածքներում կամ հարստացուցիչ ֆաբրիկայում ծանր մետաղների մոնիթորինգ չի պահանջվում:

7. ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի N 191-Ն որոշման կարգի «Հողային ծածկույթ» -ի բաղադրիչի «Ցուցանիշում» Fe, Ba, Sr, B, և Se տարրերին ներկայացված է մշտադիտարկումների պահանջ: Մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարի ինչպես 2010թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանով, այնպես էլ 2015 թվականի հունիսի 6-ի 25-Ն հրամանով այդ տարրերի համար սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ չի սահմանել, հետևապես այդ տվյալները չեն կարող հետագայում օգտագործվել որպես մարդու առողջության վրա ազդեցության գնահատման համար:
8. Կառավարության 2018 թվականի N 191-Ն որոշման մեջ մոնիտորինգի պահանջ չի ներկայացվել մետաղական հանքավայրերի շահագործման հետևանքով հողն աղտոտող այնպիսի մետաղների նկատմամբ, ինչպիսիք են բիսմութը (Bi), ուրանը (U), անագը (Sn), կադմիումը (Cd), ալյումինը (Al) և այլ:

4. «Թափոնների մասին» ՀՀ օրենք

Համաձայն հողված 1-ի՝ օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

Հողված 2-ը սահմանում է, որ օրենքի գործողությունը տարածվում է արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման ընթացքում գոյացած թափոնների գործածության վրա և չի տարածվում հոսքաջրերին խառնվող և բնական ջրատարներ թափվող նյութերի վրա, և որ օրենքի գործողությունն ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների մշակման հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում է այնքանով, որքանով չի հակասում Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված կարգավորումներին:

Հողված 4-ով սահմանվում է, որ արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոններ են համարվում արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդները, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները, իսկ վտանգավոր թափոններ են համարվում այն թափոններ, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգ են ստեղծում կամ կարող են ստեղծել մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, և պահանջվում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ, միջոցներ: Նույն հողվածով սահմանված են ընդերքօգտագործման թափոնները (օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և

հարստացման արդյունքում առաջացած մակաբացման ապարներ և այլ թափոններ) և մակաբացման ապարները /հանքամարմինները կողքերից պարփակող և վրայից ծածկող, ինչպես նաև հանքամարմինների սահմաններում գտնվող դատարկ ապարներ և ոչ հաշվեկշռային պաշարներին դասվող օգտակար հանածոներ, որոնք ենթակա են դեպի հատուկ հատկացված տեղեր փոխադրման/:

Հոդված 6-ով սահմանված է, որ թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանությունն է թափոնների բացասական ներգործությունից:

Հոդված 8-ի գ կետին համապատասխան ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի N 430-ն հրամանով հաստատվել է ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը:

Այդ ցանկում, որը կազմված է ըստ վտանգավոր թափոնի ծագման աղբյուրի, բացակայում է «ընդերքօգտագործում» աղբյուրը: Ընդերքօգտագործման վտանգավոր թափոնների մեջ պարունակող ենթադրյալ վտանգավոր նյութերը և միացությունները ջրված են ամբողջ ցանկում:

Օրենքի հոդված 9-ի համաձայն՝ թափոնների գործածության ոլորտում առողջապահության բնագավառի կառավարման լիազորված մարմինը պետք է թափոնների գործածությանը վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում մշակեր մարդու առողջության համար անվտանգության պահանջներ և թափոնների գոյացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասագերծման և թաղման ընթացքում մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով սանիտարական և հակահամաճարակային կանոններ ու նորմեր, հիգիենիկ նորմատիվներ և դրանց պահանջների կատարման նկատմամբ իրականացնել վերահսկողություն:

Առ այսօր այդ պահանջը չի կատարվել, բացառությամբ բժշկական թափոնների մասով (Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N-03-Ն հրաման)

Հիմնական բացեր

1. «Ընդերքօգտագործման վտանգավոր թափոններ» հասկացությանը ընդհանուր բնութագիր է տրված «Թափոնների մասին» ՀՀ օրենքում և «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում, չի ներկայացվում թափոնների վտանգավորության աստիճանի գնահատման մեթոդաբանությունը: «Ընդերքօգտագործման թափոններ» և

«ընդերքօգտագործման վտանգավոր թափոններ» եզրույթները լրացուցիչ օրենսդրական հստակ և պարզ ձևակերպման կարիք ունեն:

2. Հաշվի առնելով մետաղական հանքաքարերի հարստացման արդյունքում առաջացած թափոնների՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության առանձնահատկությունները՝ չի տրվել նաև թափոնների կառավարման առանձնահատկությունները:
3. Չի մշակվել ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանում է թափոնների բացասական ազդեցությունից մարդու առողջության պահպանման առաջնահերթ միջոցառումները, ինչը «Թափոնների մասին» օրենքի պահանջն է:

5. ՀՀ հարկային օրենսգիրք

Տարիներ շարունակ ընդերքօգտագործման թափոնները չեն հանդիսացել շրջակա միջավայրում տեղադրման համար բնապահպանական վճարների հարկման ենթակա օբյեկտներ և դրանք տեղադրողների նկատմամբ չի կիրառվել «աղտոտողը վճարում է» միջազգային նորմը: Սակայն 2016 թվականին ընդունված նոր՝ ՀՀ Հարկային օրենսգրքի (ՀՕ 165-Ն, 2016թ) հոդված 117-ով, ամրագրվել է, որ պոչամբարներում, արտադրական լցակայանների, մակարացման ապարների տեղամասերում և (կամ) համանման վայրերում մետաղական հանքավարեր ընդերքօգտագործման թափոնների մեկանգամյա տեղադրման կամ պահման համար 2021 թվականի հունվարի 1-ից պետք է վճարեն նապահպանական հարկ՝ յուրաքանչյուր տոննայի համար 3-250 դրամ դրույքաչափով:

Արդյունքում ստացվել է, որ մետաղական հանքարդյունաբերական թունավոր թափոններն ավելի անվտանգ են, քան քաղաքացու առաջացրած կենցաղային թափոնը, որի 1 տոննայի համար սահմանված է 600 դրամ դրույքաչափ:

Հիմնական բացերը

1. Օրենսգրքի 117 հոդվածի՝ 2021 թվականից կիրարկման համար չկան նոր առաջացող թափոնների արտահոսքի ծավալների ինչպես չափագրման, այնպես էլ նրանցում առկա վտանգավոր նյութերի պարունակությունների գնահատման բավարար մեխանիզմներ:

2. Օրենսգիրքը չի նախատեսում նախկինում կուտակված ընդերքօգտագործման թափոնների դիմաց վճարումների մեխանիզմների ներդնման դրույթ:

3. Սահմանված դրույքաչափերը հիմնավրված չեն, կարիք ունեն վերանայման:

6. ՀՀ Հողային օրենսգիրք

Համաձայն օրենսգրքի՝ հողը պատկանում է պետությանը կամ համայնքներին և կամ մասնավոր անձանց: Օրենսդրությունը սահմանում է ընդերքօգտագործման նպատակով հողատարածքի հատկացման և օգտագործման հստակ գործընթաց, որի շրջանակներում բանակցություններ են վարվում ընկերությունների և հողի սեփականատերերի միջև: Ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող հողի նկատմամբ գերակա հանրային շահ ճանաչվելու դեպքում ընդունվում են հողի օտարման, հողի նշանակության փոփոխման և փոխհատուցման մասին կառավարության համապատասխան որոշումներ (հոդված 2, մաս 1. ենթակետ 7, հոդված 66, կետ 1, ենթակետ 11, հոդված 104):

Օրենսգիրքի հենց առաջին հոդվածով սահմանվում է հողի տիրապետման, օգտագործման և տնօրինման պարագայում շրջակա բնական միջավայրի և մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ միջավայրի ապահովման նախապայմանը:

Ամրագրված է, որ հողամասի թույլատրված օգտագործումը կարող է արգելվել կամ սահմանափակվել, եթե այդ օգտագործումը հանգեցնում է հողի որակի ու բերրիության անկմանը: Հողի տրամադրումը կարող է պարունակել պահանջներ, որոնք ուղղված են շրջակա բնական միջավայրի վատթարացման կանխմանը, մարդու առողջության վրա վնասակար ազդեցություն թողնող կամ դրա վտանգի մեծացման հետ կապված հողօգտագործման ձևերին, շրջակա բնական միջավայրի վրա ազդեցության թույլատրելի նորմերին և հողերի աղտոտմանը, հողերի պահպանության և խախտված հողերի վերականգնման միջոցառումների իրականացմանը (հոդված 8): Նույն հոդվածի 3-րդ մասում ամրագրվում է, որ այդ պահանջները սահմանվում են անկախ տվյալ հողամասի նկատմամբ իրավունքներից և սեփականության ձևից:

Համաձայն հոդված 36-ի՝ հողերի պահպանության ոլորտում բնապահպանական բաղադրիչը դիտարկվում է որպես հողերի ընդհանուր պահպանության համակարգի մաս: Նույն հոդվածի 2-րդ կետով թվարկված են հողերի պահպանության խնդիրները, որնց շարքում են՝ խախտված հողերի վերականգնումը, դրանք տնտեսական շրջանառության մեջ ներառումը. հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, սողանքներից, անապատացումից, հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանումը, բնապահպանական միջոցառումների իրականացումը:

Համաձայն հոդվածի 7-րդ կետի՝ այդ նպատակով կառավարությունը սահմանում է հողն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջները, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկը, հողն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի նորմերը, հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման կարգը (Սահմանված են ՀՀ կառավարության 8 փետրվարի 2018 թվականի N 124-Ն որոշմամբ. ՀՀ Առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանով):

Եթե սեփականատիրոջ կողմից հողերը դիտավորյալ և պարբերաբար աղտոտվել են ռադիոակտիվ և քիմիական նյութերով, արտադրական թափոններով, կեղտաջրերով . . . , կամ

հողն օգտագործվել է մարդկանց առողջությանը վնաս պատճառելուն հանգեցնող կամ նման վնաս պատճառելու իրական վտանգ ստեղծող եղանակներով. ապա դատական կարգով այն անհատույց վերցվում են սեփականատիրոջից (Հոդված 105, կետ 6.):

Բնակավայրերի սահմանագծերում ընդգրկված հողերում ընդերքի ու բնական պաշարների օգտագործումը սահմանափակվում կամ արգելվում է, եթե նման գործողությունները կարող են վտանգ ստեղծել մարդկանց կյանքի ու առողջության համար և վնաս պատճառել շրջակա բնական միջավայրին (Հոդված 107, կետ 2.):

Հիմնական բացերը

1. Օրենսգիրքն ամբողջովին և լիարժեք չի ապահովում ընդերքօգտագործման նպատակով համայնքային հողերի օգտագործման պայմանագրերի կնքման գործընթացը: (Ըստ Ընդերքի մասին օրենսգրքի՝ ընդերքը պետության սեփականությունն է, իսկ այս օրենսգրքով հողը պատկանում է պետությանը կամ համայնքներին և կամ մասնավոր անձանց, ինչի հետևանքով ընդերքօգտագործման նպատակով հողերի օգտագործման պայմանագրերի կնքման գործընթացում ծագում են օրենսդրական հակասություններ):
2. Ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող հողի նկատմամբ գերակա հանրային շահ ճանաչվելու գործընթացը չի հենվում փոխհատուցման և տարաբնակեցման հարցերում հողի սեփականատերերի և հողօգտագործողների իրավունքների պաշտպանությանն ուղղված ժամանակակից հայեցակարգերի վրա:
3. Հանքարդյունահանման հետևանքով հողերի աղտոտվածության կանխարգելման և դրա հետևանքների վերացման պատասխանատու մարմինների դերաբաշխումը հստակ ձևակերպում չունի:
4. Օրենսգրքից բխող ենթաօրենսդրական ակտերը չեն ապահովում հանքարդյունահանման արդյունքում հողն աղտոտող տարրերի նկատմամբ մոնիտորինգը:
5. Մինչ այժմ չի ապահովվել օրենսգրքի 13-րդ հոդվածով պահանջվող՝ ընդերքօգտագործման նշանակության օբյեկտների հողերի օգտագործման հատուկ պայմանները սահմանող կարգը /միայն ՀՀ կառավարության «Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի մայիսի 2-ի N 625-Ն որոշման մեջ հպանցիկ նշվում է, որ ընդերքօգտագործման համար առանձնացված տարածքների հողերի օգտագործման սխեմաներում պետք է ամրագրվեն պահպանական, սանիտարական և այլ սահմանափակող գոտիներ:

6. «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք

Հոդվածում 1-ում ամրագրվում է, որ օրենքի կարգավորման ոլորտները է նաև ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումների ապահովումը, և որ այդ միջոցառումները պետք է բխեն ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման հանգամանքից և ապահովեն ջրի մատչելիության նախապայմաններ:

Հոդված 3-ով սահմանվող օրենքի նպատակները դարձյալ նշվում է, որ օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով պետք է ապահովվի բնակչության և տնտեսության պահանջները և շրջակա միջավայրի էկոլոգիական կայունությունը:

Հոդված 16-ով ամրագրված են ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գերակա խնդիրները, որոնց մեջ առանձանում են խմելու ջրամատակարարման, ցամաքուրդային, ոռոգման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների որակի և կառավարման նկատմամբ հսկողության ապահովումը, ջրօգտագործողների կողմից ջրամատակարարման և հեռացվող կեղտաջրերի որակի մոնիթորինգի իրականացման բարելավումը, շրջակա միջավայրի աղտոտման նվազեցումը. ջրի հաշվառման համակարգի ներդրումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման, կառուցման և շահագործման գործընթացում արդիական տեխնոլոգիաների կիրառումը, ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման ապահովումը:

Համաձայն հոդված 21-ի՝ ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է ըստ մոնիթորինգային ծրագրերի ազգային և ջրավազանային մակարդակներում: Հոդվածի 3-րդ մասով սահմանվում է մոնիթորինգային ծրագրում ներառվող պահանջները, որոնք են՝ 1) ցուցանիշների համախմբի ընտրությունը. 2) ջրային ռեսուրսի հետազոտվող հատվածի, նմուշառման, դիտարկման կամ ջրաչափական կետի ընտրությունը. 3) հետազոտվող միջավայրի (ջուր, հատակային նստվածքներ, բիոտա և այլն) ընտրությունը. 4) նմուշառումների և (կամ) չափումների պարբերականության որոշումը. 5) միջազգային ստանդարտներին ներդաշնակ նմուշների պահմանը և փոխադրմանը ներկայացվող պահանջների ընտրությունը. 6) միջազգային չափանիշներին ներդաշնակ լաբորատոր վերլուծության և չափման մեթոդների ընտրությունը, 7) ստացված տվյալների որակի վերահսկման ու գնահատման համակարգի և դրա ներդրման պլանի մշակումը. 8) տվյալների օպերատիվ և համապարփակ մշակման, տվյալներին համապատասխան նպատակային տեղեկատվության վերափոխման սխեմայի մշակումը. 9) տեղեկատվության ներկայացման հիմնական ձևերի մշակումը և (կամ) ընտրությունը. 10) տվյալները շահագրգիռ անձանց տրամադրելու կարգի և ժամանակի համաձայնեցումը. 11) ծախսերի պլանավորումը և ֆինանսավորման աղբյուրների հստակեցումը. 12) ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների գնահատման չափորոշիչների որոշումը. 13) ծրագրի իրականացման, գնահատման և թարմացման ժամանակացույցի մշակումն ու ընդունումը:

Հոդված 26-ը վերաբերում է ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիների սահմանմանը, համաձայն որի՝ դրանք այն տարածքներն են, որտեղ բնական երևույթների, տնտեսական կամ այլ գործունեության հետևանքով շրջակա միջավայրում տեղի են ունեցել բացասական փոփոխություններ, որոնք սպառնում են բնակչության առողջությանը, բնական էկոհամակարգերի հավասարակշռվածությանը, բուսական և կենդանական աշխարհին: Նույն հոդվածով սահմանվում է, որ արտակարգ էկոլոգիական իրավիճակի և էկոլոգիական աղետների գոտու տարածքներում մարդկանց կյանքի, առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող բնական ռեսուրսների օգտագործման հետ կապված տնտեսական գործունեության որոշակի տեսակները դադարեցվում կամ սահմանափակվում են:

Հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ այդ գոտիները սահմանում է ՀՀ կառավարությունը՝ գնահատելով իրավիճակը:

Օրենքի հավելվածով հաստատված է Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումների փուլային ծրագիրը:

Օրենքի ընդունումից հետո՝ օրենքի 16-րդ հոդվածով Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գերակա ուղղությունը սահմանված խնդիրներների մեծ մասը, համապատասխան մեխանիզմների և միջոցների բացակայության պատճառով հնարավոր չի եղել ապահովել: Այսպես՝

- ***ՀՀ- ում դեռևս կան բնակավայրեր, որտեղ առկա են համապատասխան որակի և քանակի խմելու ջրի անհասանելիության խնդիրներ:***
- ***Քայքայված են խմելու և ոռոգման ջրի ցանցերը, մեծ չափերի են հասնում ջրակորուստները:***
- ***Ջրօգտագործողների կողմից չի կատարվում ջրամատակարարման և հեռացվող կեղտաջրերի որակի մոնիթորինգ***
- ***Շրջակա միջավայրը շարունակվում է աղտոտվել արդյունաբերական, կոմունալ կենցաղային և հանքարդյունաբերական կեղտաջրերով, քանի որ չկան դրանք զսպող մեխանիզմներ, և կեղտաջրերի բավարար մաքրման կայաններ, չեն ներդրվում կեղտաջրերի մաքրման նոր տեխնոլոգիաներ:***

Հիմնական բացերը

1. Օրենքն առաջին հայացքից թվում է բավարար, սակայն այն ավելի շուտ կրում է դեկլարատիվ բնույթ և չի ապահովում ջրային ոլորտի ամբողջական և անվտանգ կարգավորումը:

2. Օրենքի հոդված 26-ով սահմանվող՝ մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց թողած բացասական հետևանքով ջրերի արտակարգ էկոլոգիական աղետների գոտիների բնութագրի և դրա հետևանքով կանխարգելիչ միջոցների կիրառման մասին դրույթներ չեն աշխատում, քանի որ չի տրված դրանց հստակ չափորոշիչները: ՀՀ կառավարության կողմից այդ աղետների գոտիները դեռևս չեն հաստատվել:
3. Օրենքի՝ «Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումների փուլային ծրագիր» հավելվածով նշված միջոցառումները, որոնք նպատակ ունեն ստեղծելու ջրային ոլորտում կիրառվող միասնական և համաձայնեցված օրենքներ, կանոնակարգեր, ընթացակարգեր և իրավական լծակներ, ամբողջովին չեն լուծվել:
4. Նույն հավելվածով նշվող՝ «Ջրային ոլորտի գերատեսչությունների դերերի և պատասխանատվությունների հստակեցում» ինստուտոցիոնալ միջոցառումները նույնպես առ այսօր չեն կարգավորվել: Ջրային ոլորտի կառավարման պատկան մարմինների գործողությունները դեռևս հստակ տարանջատված չեն, թույլ է նրանց միջև համագործակցությունը և կանոնակարգված չեն տվյալների ու տեղեկատվության փոխանակման մեխանիզմները:
5. ՀՀ ջրավազանային կառավարման հինգ մարմինների լիազորությունները դեռևս բավարար չեն տվյալ ավազանում ջրային ռեսուրսների լիարժեք կառավարում ապահովելու համար:
6. Ազգային ու ջրավազանային մակարդակներում ջրային ոլորտի պլանավորման ու որոշումների կայացման գործընթացներում չկան հասարակության իրազեկության բարձրացման և մասնակցության դերի հստակ մեխանիզմներ: Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացում հասարակական լսումները կրում են ձևական բնույթ, չեն ստեղծվում ջրօգտագործման թույլտվության որոշման վրա այդ լսումներում հասարակայնության կարծիքների ազդեցության գործուն իրավական կարգավորման լծակներ:
7. Օրենքում բացակայում են Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության համակարգի/մարմնի ստեղծման մեխանիզմները:

9. ՀՀ Ջրային օրենսգիրք

Հոդված 1-ի համաձայն՝ ջրային ռեսուրսների մոնիտորինգը ջրային ռեսուրսների նկատմամբ կանոնակարգված դիտարկումների (ջրաերկրաբանական, ջրաբանական, ջրաֆիզիկական, ջրաքիմիական և ջրակենսաբանական), դրանց արդյունքում ստացված տեղեկատվության հավաքման, մշակման, ջրային ռեսուրսների որակական և քանակական գնահատման ու փոփոխությունների կանխատեսման և ջրային ռեսուրսների վիճակի մասին տեղեկատվության տրամադրման համակարգ է:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականություն են ու տնօրինվում, տիրապետվում և օգտագործվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 6. Օրենսգրքի նպատակն ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ և համապարփակ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

Հոդված 19-ով ամրագրված են ջրային ռեսուրսների մոնիտորինգի խնդիրները, որոնցից են՝ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով դրանցում կատարված փոփոխությունների բացահայտումը, այդ փոփոխությունների գնահատումը և համապատասխան միջոցառումների կիրառումը, շրջակա միջավայրի և ջրաէկոհամակարգերի փոխազդեցությունների բացահայտումը, դրանց հնարավոր փոփոխությունների (կարճաժամկետ և երկարաժամկետ՝ ոչ պակաս 10 տարվա դիտարկումների արդյունքներով) կանխատեսումը և պահպանությանն ուղղված միջոցառումների կիրառումը: Սահմանված է, որ ոլորտում մոնիտորինգն իրականացվում է ՀՀ ու համայնքային բյուջեների, կազմակերպությունների միջոցների և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Հոդված 30.2-ով սահմանված ջրօգտագործման թույլտվությունը կասեցման սահմանված դեպքերի շարքում են նաև ջրի որակական և քանակական չափորոշիչների խախտումները և շրջակա միջավայրը պահպանելու անհրաժեշտությունը (մաս. 2) և ջրօգտագործողի կողմից ջրօգտագործման թույլտվության պահանջների կամ պայմանների խախտումը (մաս 5):

Հոդված 31-ով սահմանվում են ջրօգտագործման հայտի գնահատման չափանիշները, որոնց թվում են՝ 5) սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները (մաս 5) և հասարակայնության ծանուցման արդյունքում ստացված կարծիքները (մաս 6): Նույն հոդվածով սահմանվում են նաև ջրօգտագործման հայտերի բավարարման առաջնահերթությունները, որոնց թվում որպես թիվ 1-ին առաջնահերթություն է սահմանված մարդկանց բարեկեցության և շրջակա միջավայրի պահպանությունն ու բարելավումը, իսկ թիվ 4-րդ գերակայությունը տրվում է այն ջրօգտագործողներին, որոնք որոնք իրենց հայտով հայտով առաջարկում են ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խրախուսմանն ու որակի բարելավմանն ուղղված որոշակի միջոցառումներ:

Հոդված 33-ով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման պայմաններից է սահմանված նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննության պայմանների անփոփոխությունը:

Հոդված 37.1.1-ով 07.07.2022թ. ՀՕ-319-ով սահմանվել է «ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանության դրամագլուխ» հասկացությունը, համաձայն որի ստորերկրյա ջրային ռեսուրսից հորատանցքի միջոցով ջրառ իրականացվելու դեպքում ջրօգտագործողի կողմից սահմանված չափով փոխանցվում է ֆինանսական միջոցներ, որը հետագայում

օգտագործվում է բացառապես ստորերկրյա ջրերի արդյունահանումից հետո հորատանցքերի կոնսերվացման կամ լուծարման համար:

Օրենսգրքի 62.1 հոդվածով սահմանված են ջրահեռացմանը ներկայացվող պահանջները, որոնց շարքում է ջրային ռեսուրսի մեջ արտադրական կեղտաջրերի արտահոսքի արգելանքը այն դեպքում, երբ կեղտաջրերի քանակական և որակական ցուցանիշները գերազանցում են դրանց սահմանային արտահոսքի թույլատրելի ընդհանուր և անհատական չափաքանակները: 62.1 հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ նախնական՝ մաքրում իրականացնելու պահանջն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից՝ արտադրական այն կեղտաջուր արտանետողների նկատմամբ, որոնց արտանետումներում կախված նյութերի կամ թթվածնի կենսաբանական պահանջի տարեկան քանակը կազմում է մեկ տոննա և ավելի, կամ ծանր մետաղների գումարային քանակը տարեկան կազմում է 100 կգ և ավելի, իսկ մնացած այլ արտադրական կեղտաջուր արտանետողների նկատմամբ՝ 2030 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 66-ի համաձայն ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը տարին առնվազն երկու անգամ իրականացնում է ջրի որակի ստանդարտների մանրակրկիտ ստուգում (վերանայում), ներառյալ սոցիալական և բնապահպանական ազդեցությունները, առաջարկում է դրանցում փոփոխություններ և այդ տեղեկատվությունը ներկայացնում է կառավարություն՝ որպես Ջրի ազգային ծրագրի մաս:

Հոդված 68.1-ի համաձայն մակերևութային ջրային մարմինների համար սահմանվել են վատ, անբավարար, միջակ, լավ և գերազանց կարգավիճակների ջրի որակի նորմեր, որը սահմանում է ՀՀ կառավարությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի պահանջով ամրագրվել է դրույթ, համաձայն որի ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը մշակում է միջոցառումներ առաջնային աղտոտիչներով մակերևութային ջրային մարմնի աղտոտումը վերացնելու, իսկ մյուս աղտոտիչներով՝ կրճատելու ուղղությամբ:

Հոդված 99-ով ներկայացված են ջրային ռեսուրսների պահպանության հիմնական պահանջները, որոնց թվում են՝

- տրվում են օգտագործման, եթե երաշխավորվում է դրանց պահպանությունը և վերարտադրությունը
- օգտագործումը պետք է ապահովի տվյալ էկոհամակարգի հավասարակշռությունը
- ջրային ռեսուրսը ենթակա է պահպանության աղտոտումից, աղբոտումից, վարակումից և հյուծումից
- կեղտաջրերի արտահոսքը ջրային ռեսուրս թույլատրվում է միայն արտահոսքի թույլտվության առկայության դեպքում՝ հիմք ընդունելով ջրի որակի նորմերի վերանայումը
- ստորերկրյա ջրերի պահպանման գոտիներում սահմանափակվում կամ արգելվում են գործունեության որոշակի տեսակներ (ներառյալ՝ հողերի ոռոգումը կեղտաջրերով), լուծիչներ կամ քիմիկատներ արտադրող, օգտագործող կամ պահող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպությունների

գործունեությունը, սնտեսական գործունեության ընթացքում առաջացող հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, այլ արտադրանքների և մթերքների մնացորդների աղբանոցների տեղադրումը

- արգելվում է ռադիոակտիվ և թունավոր թափոնների արտանետումը, արտահոսքը և թաղումը ջրային ռեսուրսում, ինչպես նաև պայթեցման աշխատանքների իրականացումը միջուկային և այլ տիպի տեխնոլոգիաներով, որոնք ընթանում են ռադիոակտիվ և թունավոր նյութերի արտանետմամբ
- արգելվում է ջրօգտագործումն էկոլոգիական թողքի հաշվին:

Սույն հոդվածի պահանջների խախտման դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվում կամ արգելվում է ջրային ռեսուրսի օգտագործումը:

Հոդված 103-ով ներկայացված են ջրակեղահամակարգերի վրա ազդող շինարարական և այլ օբյեկտներին ներկայացվող պահանջները, որոնք անհրաժեշտ է պարզել դեռևս նախագծային փաստաթղթային փուլում՝ համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կողմից: Շինարարական և այլ օբյեկտի նախագծման, շինարարության, վերակառուցման, օգտագործման հանձնման և օգտագործման ընթացքում պետք է հաշվի առնվի դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ինչպես անմիջական տեղադրման գոտում, այնպես էլ ջրհավաք ավազանի վրա ամբողջությամբ: Համաձայն հոդվածի՝ արգելվում է ջրային համակարգի օգտագործման հանձնելը և օգտագործումը, որն ապահովված չէ

1) ջրերի աղբոտումը և աղտոտումը կամ դրանց վնասակար ազդեցությունը կանխող սարքերով

2) վերցվող, այդ թվում՝ էկոլոգիական թողքի կետի մուտքի և թափվող ջրերի հաշվառման միջոցներով

3) անհրաժեշտ ձկնապաշտպան հարմարանքներով

4) ջրային ռեսուրսները և ջրհավաք ավազաններն աղտոտումից պահպանող կառուցվածքներով

5) գյուղացիական անասնապահական գործունեության ոլորտի համար նախատեսված սանիտարական գոտիներով:

Հոդված 108-ի համաձայն՝ ջրահավաք ավազաններում արգելվում է տարածքների աղբոտումն արտադրական, կենցաղային կամ այլ թափոններով, ինչպես նաև դրանց աղտոտումը նավթամթերքով, թունաքիմիկատներով և վնասակար այլ նյութերով ջրային ռեսուրսների որակի վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբանոցների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրումը:

Հոդված 114-ով ամրագրված է օրենսգրքի պահանջների չպահպանման համար քրեական և վարչական պատասխանատվությունների դեպքերը, այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվության պահանջները չկատարելու կամ ջրօգտագործումն էկոլոգիական թողքի հաշվին իրականացնելու, առանց ջրերի աղտոտումը կամ դրանց վնասակար

ներգործությունը կանխող (նվազեցնող) կառուցվածքների կոմունալ և այլ օբյեկտներ օգտագործման հանձնելու, օրենսդրությամբ սահմանված չափաքանակներից ավելի ջրերն աղտոտելու, ջրերի աղտոտում, էրոզիա և այլ վնասակար երևույթներ առաջացնող՝ ջրհավաք ավազաններում ջրապահպան ռեժիմը խախտելու համար:

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարին հրապարակված ՀՀ կառավարության ծրագրի գործողությունների պլանի համաձայն՝ մինչև 2022 թվականի նոյեմբեր ամիս պետք է իրականացնեն շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի, հողերի, կենսաբազմազանության) և թափոնների հեռացման վայրերի մշտադիտարկման դիտացանցերի արդիականացում, ինչը չի կատարվել հայտնի՝ ՔՌՎԻԴ-19 համավարակի և հայ-ադրբեջանական ռազմական կոնֆլիկտի հետևանքով:

Հիմնական բացեր

1. Օրենսգիրքը չի կանոնակարգում բնակլիմայական, սոցիալ-տնտեսական նոր պայմաններին և այդ պայմանների փոփոխության արդյունքում ձևավորված ջրառաջարկին համահունչ ջրօգտագործման թույլտվությունների վերաձևակերպման գործընթացները:
2. Օրենսգիրքը չէր կարգավորում կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող ջրային ռեսուրսների նվազման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման խնդիրները (միայն 07.07.22 ՀՕ-316-Ն օրենքով կատարված փոփոխություններով են ներառվել են այս հասկացությունները):
3. Օրենսգրքից բխող՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված բնապահպանական նվազագույն հոսքերը որոշելու մեթոդաբանությունը չի ապահովում տվյալ տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանության համար անհրաժեշտ ջրաքանակները:
4. Օրենսգիրքը չի սահմանում ջրային ռեսուրսների որակի և քանակի մոնիտորինգի համար անհրաժեշտ դիտացանցի ստեղծման դրույթներ:
5. Չնայած նրան, որ օրենսգրքի պահանջով ջրօգտագործման թույլտվության տրամադրման առաջնահերթությունը տրվում է մարդկանց բարեկեցության և շրջակա միջավայրի պահպանությանն ու բարելավմանը, առաջին հերթին ապահովվելով խմելու ջրամատակարարման և ջրահեռացման գերակայությունը, օրենսգիրքը չի տալիս առաջնահերթությունների որոշման և գնահատման մեխանիզմները (իսկ ջրային ռեսուրսների մոնիտորինգի խնդիրները կարգավորվում են ՀՀ կառավարության 22 մայիսի 2003 թվականի N 639-Ն որոշմամբ և նույն որոշման մեջ լրացում կատարելու մասին 10.10.2019 թիվ 1442-Ն որոշմամբ)²:

² ՀՀ կառավարության որոշումը ջրային ռեսուրսների մոնիտորինգի իրականացման և հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին 22 մայիսի 2003 թվականի N

9. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք

Հոդված 1. Օրենքի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

Հոդված 5.1. Համաձայն այս հոդվածի՝ լիազորված մարմնի իրավասությունները մթնոլորտային օդի պահպանության բնագավառում ՀՀ պետական քաղաքականության մշակումը, մթնոլորտային օդի վիճակի մոնիտորինգի (դիտանցի) կազմակերպումը և վարումն են:

Հոդված 9-ում ամրագրված են մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների իրականացմանը հասարակական կազմակերպությունների մասնակցության իրավունքը, ինչպես նաև միջոցառումների ժամանակ նրանց կարծիքների հաշվի առնումը պետական մարմինների կողմից:

Հոդված 14-ով սահմանվում է, որ աղտոտման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները սահմանվում են լիազորված մարմնի կողմից տրամադրվող համապատասխան թույլտվությամբ:

Հոդված 15-ով ամրագրված են, որ կազմակերպությունները պարտավոր են ստանալ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետման թույլտվություն, որ իրենց գործունեության ընթացքում պարտավոր են պահել թույլտվության պահանջները և այդ պահանջների կատարումն ապահովելու համար ձեռնարկել աղտոտող նյութերի արտանետումները նվազեցնելուն ուղղված միջոցառումներ, ապահովել մաքրող կայանքների անընդմեջ և արդյունավետ աշխատանքը, հետևողականորեն բարելավել տեխնոլոգիական պրոցեսները, ինչպես նաև իրականացնել մթնոլորտային օդ արտանետվող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ:

Հոդված 16-ի համաձայն՝ լիազոր մարմիններն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են սահմանափակել կամ արգելել, կամ դադարեցնել հիմնարկների, ձեռնարկությունների, արտադրամասերի և կազմակերպությունների գործունեությունը , ... եթե վերջիններիս գործունեությունը ծավալվում է առանց սույն օրենքով սահմանված կարգով թույլտվություն ստանալը, ինչպես նաև սպառնալիք է առաջացել բնակչության առողջության համար:

Հոդված 21-ով ամրագրված են այն նորմերը, որոնք պարտավոր են պահպանել կառուցվող, վերակառուցվող և քանդվող օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների կանխարգելման համար: Այդ նորմերն են՝

639-Ն <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=10950>, որոշում, ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 10.10.2019 թիվ 1442-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docid=135577>

շինհրապարակների պարսպապատում, շենքերի և շինությունների շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկում, շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում, շինարարական աղբի և սորուն շինանյութեր տեղափոխող ավտոմեքենաների թափքերի ծածկում անթափանց ծածկոցներով, շինարարական հրապարակի՝ օրվա ընթացքում պարբերաբար ջրում՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից:

Հոդված 30-ի համաձայն՝ օգտակար հանածոների արդյունահանումը, պայթեցման աշխատանքները, տերրիկոնների, հանքաշեղջերի և թափոնների տեղափոխումն ու շահագործումը պետք է կատարվեն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազոր մարմինների, ինչպես նաև մյուս մարմինների հետ համաձայնեցված՝ մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու կամ կրճատելու վերաբերյալ կանոնների պահպանումով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 37. Մթնոլորտային օդի վիճակի նկատմամբ հսկողությունն ու վերահսկողությունը, ըստ քիմիական, ֆիզիկական և կենսաբանական ցուցանիշների, իրականացվում է բնական միջավայրի աղտոտման նկատմամբ հսկողության և վերահսկողության համապատասխան ծառայությունների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 41-ով մթնոլորտային օդի պահպանության մասին օրենսդրությունը խախտողների համար սահմանված են նյութական, վարչական ու քրեական պատասխանատվության դեպքերը այդ թվում նաև «հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցությունը խոչընդոտելու», ինչպես նաև «մթնոլորտային օդի պահպանության բնագավառում անհրաժեշտ հսկողություն և վերահսկողություն չապահովելու» դեպքերը:

Սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն, մասնավորապես, մթնոլորտային օդի պահպանության բնագավառում անհրաժեշտ հսկողություն և վերահսկողություն չապահովելու և մթնոլորտային օդի պահպանության իրականացմանը հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցությունը խոչընդոտելու համար:

«Մթնոլորտ արտանետումների կազմի նորմերն ու հսկման մեթոդները սահմանելու և ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 67-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ և 14 սեպտեմբերի 2017 թվականի N 1120-Ն որոշմամբ սահմանվում են մթնոլորտ արտանետումների դասակարգումն ըստ կազմի և մթնոլորտն աղտոտող աղբյուրներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումները (ՄԹԱ), հաշվարկման և հսկման մեթոդները:

Ըստ այս իրավական ակտի՝ յուրաքանչյուր անշարժ դիտակետում վերահսկման ենթակա նյութերի ցանկը տվյալ բնակավայրում պետք է սահմանվի Հայաստանի Հանրապետության այդ բնագավառում կառավարումն իրականացնող պետական լիազոր մարմնի կողմից և համաձայնեցվի Հայաստանի Հանրապետության առողջապահական ոլորտի պետական լիազոր մարմնի հետ:

Հիմնական բացեր

Օրենքն ընդհանուր առմամբ համապատասխանում է մթնոլորտային օդի պահպանության համար տեսականորեն պահանջվող չափանիշներին, սակայն բազմաթիվ հոդվածներ կրում են դեկլարատիվ բնույթ և գործնականում անկիրատելի են: Մասնավորապես՝

1. Հոդված 16-ով սահմանվող բնակչության առողջության համար սպառնալիքի առաջացման դեպքում կազմակերպության գործունեության դադարեցման կամ կասեցման՝ լիազոր մարմնին վերապահվող լիազորությունն անկիրատելի է, քանի որ բացակայում է այդ սպառնալիքի որոշման մեթոդաբանությունը, որը պետք է սահմանվեր կամ այս օրենքով, կամ մի այլ իրավական ակտով:
2. Մթնոլորտային օդի պահպանության ոլորտում հոդված 16-ով սահմանվող մարմինների և տեսչական մարմինների լիազորությունները չեն կրում պարտադիր կատարման ենթակա գործողությունների բնույթ, դրանք, ըստ օրենքի, կարող են նաև չկիրառվել:
3. Օրենքի 30 հոդվածը հստակ չի սահմանում օգտակար հանածոների արդյունահանման, պայթեցման, տերրիկոնների, հանքաշեղջերի և թափոնների տեղափոխման ու շահագործման աշխատանքներն իրականացնողի և լիազոր մարմինների հետ համաձայնեցնելու մեխանիզմները:
4. ՀՀ օրենքի 41 հոդվածով սահմանվող՝ «մթնոլորտային օդի պահպանության բնագավառում անհրաժեշտ հսկողություն և վերահսկողություն չապահովելու» և «մթնոլորտային օդի պահպանության միջոցառումները իրականացնելիս հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցությունը խոչընդոտելու» դեպքերի համար ՀՀ օրենսդրությամբ պատասխանատվության միջոցներ սահմանված չեն:

10. ՀՀ Քրեական օրենսգիրք

ՀՀ քրեական օրենսգրքով շրջակա միջավայրի բաղադրիչների պահպանության, աղտոտման և օգտագործման կանոնները խախտելու համար համապատասխան հոդվածներով սահմանված են դրամային պատժամիջոցներ և տարբեր տևողությամբ ազատազրկումներ մթնոլորտային օդ՝ հոդվածներ 373, 374, մակերևույթային և ստորերկրյա ջրեր՝ հոդված 375, 376, հողերի՝ հոդվածներ 381, 382, թափոնների տեղադրում՝ հոդվածներ 369, 370, ընդերքի օգտագործում՝ հոդված 383:

Բացի դրանից, օրենսգիրքը, որակելով որպես շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործություն, առանձին հոդվածներով ավելի խիստ սանկցիաների կիրառում է սահմանել շրջակա միջավայրի վրա վնասակար ֆիզիկական ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի էական գերազանցումների դեպքերի համար: Դրա համար մեղավոր անձի նկատմամբ նախատեսել է չորսից ութ տարի ժամկետով ազատազրկում՝ հոդված 366, նույն արարքն ազգուշությամբ կատարելու դեպքում սահմանում է տուգանք՝ մինիմալ աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքների՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակում՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկում՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ հոդված 367:

Հիմնական բացեր

Օրենսգիրքն այս հոդվածների կիրառման համար չի սահմանել «սահմանային թույլատրելի մակարդակի էական գերազանցում», «կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի օբյեկտների զանգվածային ոչնչացում», «կենդանական կամ բուսական աշխարհին էական վնասի պատճառում» եզրույթները: Այսպիսով իրավակիրառողի գնահատմանն է թողնված այդ հնարավոր հետևանքները ծանր կամ էական դիտարկելը, և այն կախված է նրա սուբյեկտիվ գնահատականից: Անհրաժեշտ է նշել, որ այս հոդվածներով քրեական գործերի հարուցման դատական պրակտիկան բացակայում է, բացառությամբ բուսական և կենդանական աշխարհների մասով:

11. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգիրք

Այս օրենսգրքով սահմանված են շրջակա միջավայրի՝ սույն ծրագրի շրջանակներում ուսումնասիրության ենթակա բաղադրիչների օգտագործման և պահպանության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության մի շարք հոդվածներ: Օրենսգրքի հոդված 242-ով սահմանվել են շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմնի կողմից այդ իրավախախտումների գործերի վարույթի լիազորությունները՝ օրենսգրքի 49-րդ հոդվածով (բացառությամբ լեռնային աշխատանքների անվտանգ կատարման մասի), 50-52-րդ, 54²-րդ հոդվածներով (հողերի պահպանության մասով), 54⁴-րդ հոդվածով, 61-րդ հոդվածներով, 62-րդ հոդվածով (ջրային ռեսուրսների պահպանության մասով), 63²-րդ հոդվածով, 63⁶-րդ հոդվածով (բնական ջրային օբյեկտների մասով), 64-66-րդ, 68-79-րդ հոդվածներով, 80-րդ, 80¹-87-րդ հոդվածներով (մթնոլորտային օդի պահպանության համար սահմանված նորմերի ու կանոնների խախտման մասով), 87.1 (Օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածիսածինների առաքման թույլտվություն ստացած հայտատուների կողմից այդ նյութերի ներմուծման անհատական չափաքանակների օգտագործման մասին

օրենքով նախատեսված հաշվետվությունը պետական լիազոր մարմին չներկայացնելը), 94-րդ (Բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմը խախտելը), 94¹ (Առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության գործունեություն իրականացնելը), 157-րդ հոդվածի առաջին մասը (Պաշտոնատար անձանց կողմից իրենց տնօրինության տակ գտնվող կանաչ գոտիների պահպանության ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը), 169⁴ (Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկները չներկայացնելը, անհրաժեշտ տվյալները ներկայացնելու կարգը խախտելը կամ տվյալներն աղավաղելը), 169¹⁹ («Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին», «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» և «Զրօգտագործման մասին» տարեկան վարչական-վիճակագրական հաշվետվությունները սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը, 201.1-201.5-րդ (Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվություն չներկայացնելը) հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ:

Հիմնական բացեր

ՀՀ Վարչական օրենսգրքի հոդվածներին համապատասխան՝ շրջակա միջավայրի ոլորտում խախտումների համար նախատեսված պատժամիջոցները համարժեք չեն կատարվող խախտումներին, դրամական տուգանքների չափն այնքան փոքր է, որ խախտողը նախընտրում է վճարել վարչական տուգանքը, քան ավելի մեծ գումար ծախսել այն վերացնելու համար:

Եզրակացություն

Գործող օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի վերլուծության արդյունքում հանքարդյունաբերության և վերամշակման ճյուղերում էական բացթողումներ են հայտնաբերվել ինչպես կիրառման, այնպես էլ ազդեցության համայնքներում բնական պաշարների ռացիոնալ օգտագործման մեխանիզմների ապահովման, բացասական հետևանքների կանխարգելման, շրջակա միջավայրի շարունակական աղտոտման, սոցիալական վիճակի և առողջության վատթարացման կարգավորման ոլորտներում: Պետական վերահսկողության թերաբժեքությունը և այլ թերությունները կրում են համակարգային բնույթ:

Օրենսդրության անկատարությունը հիմնական պատճառներից մեկն է, որը խրախուսում է անպատասխանատու բիզնեսը, չի խթանում այս ոլորտում կառավարման լիազորություններով օժտված պետական մարմինների պատասխանատվությունը, չի նպաստում տեխնիկական առաջընթացին: Այս ամենի հետևանքով բնակչությունը ազդակիր համայնքներում գտնվում է սոցիալական վատ վիճակում և չունի այլընտրանքային ծրագրեր իր զարգացման համար, չունի բավարար մեխանիզմներ իր սոցիալական և բնապահպանական իրավունքների պաշտպանության համար:

Վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ օրենսդրական դաշտի բարելավման և հանքարդյունաբերության և վերամշակման ոլորտի բարեփոխման քաղաքականության ու ծրագրերի մշակման համար առաջարկությունների համար: